«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և
սպորտի պետական ինստիտուտի ռեկտոր՝
մ.գ.թ., պրոֆեսոր _____ Գ.Ս ԽԻԹԱՐՅԱՆ
«11», «հոկտեմբեր» 2022թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ԱՐՈՒՍՅԱԿ ԳԵՎՈՐԳԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԺԹ.00.03 – «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ (ՀՀ ոստիկանության օրինակով)» թեմայով ատենախոսության:

Արուսյակ Գևորգի Գևորգյանի թեկնածուական ատենախոսությունը վերաբերվում է ՀՀ իրավապահ մարմիններում՝ ի դեմս ոստիկանության համակարգի, կոնստրուկտիվ կառավարման բարեփոխումների սոցիալ-հոգեբանական հիմնահարցերին:

Կառավարչական գործունեությունը անհատական և համատեղ իրականացվող գործառույթների միասնություն է, ինչը ենթադրում է սոցիալ-հոգեբանական այնպիսի մթնոլորտի ստեղծում, որը խթան կհանդիսանա տարբեր ստորաբաժանումներում ծառայող անձանց մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման համար:

Ատենախոսի կողմից իրականացված թեմայի արդիականությունը և այժմեականությունը կասկած չի հարուցում, առավել ևս վերջին տասնամյակում պայմանավորված տարածաշրջանում ռազմաքաղաքական ու տնտեսական իրավիճակներով: ՀՀ իրավապահ մարմիններում ղեկավարի գործառույթների բարեփոխումները նորովի սոցիալ-հոգեբանական պահանջներ են առաջադրում իրավապահ մարմիններում կառավարչական գործունեության ղեկավարի անձին ու մասնագիտական պատրաստությանը: Իսկ մեր օրերում իրավապահ մարմիններում մարդկային ռեսուրսների կառավարող ղեկավարի գործունեության կոնստրուկտիվության հոգեբանական ապահովման անհրաժեշտությունը դարձել է առաջնային, ինչի ուսումնասիրությանն է նվիրված Ա. Գ. Գևորգյանի թեկնածուական ատենախոսական աշխատանքը:

Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 148 էջ: Այն ներառում է ներածություն, 3 գլուխներ, եզրակացություններ, օգտագործված գրականության ցանկ, 2 հավելված բաժինները:

Ատենախոսության դիդակտիկ նյութը ներկայացված է 8 աղյուսակի և 11 գծապատկերների ձևով:

Ներածություն բաժնում հստակ ներկայացված է թեմայի արդիականությունը, հիմնախնդրի մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը, առարկան, հետազոտության նպատակը, վարկածը, խնդիրները, տեսամեթոդական հիմքը, հետազոտության մեթոդները, հետազոտության համակազմը, հետազոտության փուլերը, պաշտպանության ներկայացվող դրույթները, գիտական նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսը հետազոտության տեսական և մեթոդաբանական աղբյուրների ուսումնասիրման արդյունքում բազմակողմանի և համակարգված վերլուծել է իրավապահ մարմինների աշխատակիցների պրոֆեսիոգրամայի և փսիխոգրամայի պահանջներին համապատասխան մարդկային ռեսուրսների կառավարման յուրահատկությունները, որտեղ առաջնային տեղ է զբաղեցնում ղեկավարն իր հոգեբանական առանձնահատկություններով և մասնագիտական կոմպետենցիաներով:

Հենվելով հայ, ռուս և արտասահմանյան հեղինակների վերջին ժամանակաշրջանի «Անձնակազմի կառավարման», «Քոփինգ-ռազմավարության», «Մարդկային ռեսուրսների կառավարման», «Ղեկավարի շփման ոճի», «Կառավարման հոգեբանության», «Անձի հոգեբանական անվտանգության», «Լիդերության հիմնախնդիրների», «Հանրային ծառայողների», «Մասնագիտական կողմնորոշման», «Անձի և պաշտոնի», «Դժվար կոնֆլիկտածին իրավիճակների» և այլն ուսումնասիրությունների սոցիալ-հոգեբանական հիմնահարցերի լուսաբանությունների վրա, ատենախոսը լիարժեք ու փաստարկված է ներկայացրել հիմնախնդրի մշակվածության աստիճանը և ձևակերպել հետազոտության նպատակն ու վարկածը:

Այնուհետև ատենախոսը հետազոտության տեսամեթոդաբանական հիմքի վրա կատարել է որակական և քանակական հետազոտական մեթոդներն ու մեթոդիկաների ընտրություն:

Փորձարարական հետազոտությանը մասնակցել է իրավապահ մարմինների 66 ղեկավարներ ու 196 աշխատակիցներ և այն իրականացվել է 3 փուլով:

Ատենախոսը իրականացրել է հետազոտության տվյալների համեմատական, համահարաբերակցական կապերի և բազմագործոն վերլուծություններ ու դրանց մեկնաբանություններ: Այսպես, ըստ ատենախոսի արձանագրվել են՝ «Արդյունավետ աշխատանքին խոչընդոտող գործոնները», «Աշխատակիցների սոցիալ-հոգեբանական դիրքորոշումների և աշխատանքից բավարարվածության միջև համահարաբերակցային կապերը», «Ոստիկանական համակարգում մարդկային ռեսուրսների կառավարմանն առնչվող սոցիալ-հոգեբանական հիմնական յուրահատկությունները և դրանց հետևանքները», «Ղեկավարների որոշումների կայացման ոճերի և կոնստրուկտիվ կառավարման միջև առկա

համահարաբերակցային կապերը», «Ղեկավարների անձնային հատկությունների և ղեկավարման ոճերի միջև առկա համահարաբերակցային կապերը»:

Վերոնշյալ տվյալների ամփոփման արդյունքում ձևավորվել է օպերատիվ գործառույթ իրականացնող ստորաբաժանման կոնստրուկտիվ կառավարող ղեկավարի և կրթահամալիրի կոնստրուկտիվ կառավարող ղեկավարի մոդելները:

Ատենախոսական աշխատանքի օգտագործած գրականության ցանկում ընդգրկված է 193 աղբյուր, այդ թվում 21-հայերեն, 119-ռուսերեն, 59-անգլերեն լեզուներով, որոնք ներառվել են ըստ բաժինների և հարստացրել ու փաստարկել են ատենախոսի գիտամեթոդական ու գործնական միտքը:

Խորը, ծավալուն և բազմաբնույթ վերլուծությունների արդյունքում ատենախոսին հաջողվել է լուծել հետազոտությունում առաջադրված հիմնական խնդիրները և հանգել կոնկրետ ու հստակ եզրակացությունների, որոնք ներկայացնում են ատենախոսության պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթների պահանջները, գիտական նորույթը, տեսական ու գործնական նշանակությունը:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանն և արտացոլում է հիմնական բովանդակությունը:

Որպես հետազոտական աշխատանք առկա են որոշ թերություններ ու բացթողումներ որոնց պարզաբանումը կբարձրացնի ատենախոսության գիտամեթոդական արժեքը:

Դիտողություններ

1. Ներկայացնելով ոստիկանության համակարգի աշխատակիցների մասնագիտական պատրաստության հոգեբանական հարցերը (էջ 62-63) ցանկալի է անդրադառնալ հուզական լարվածության վիճակի օպտիմալ (բարենպաստ) մակարդակի ապահովման, ինքնականոնավորման («Գոյատևման մեխանիզմ»), վարքի ինքնակառավարման ունակությունների և տեխնիկայի հարցերին:
2. Հոգեբանական պատրաստվածության ծայրահեղ պայմաններում և ժամանակի սուղ լիմիտի հոգեֆիզիոլոգիական առումով ներկայացման փաստը առնչվում է նաև ըստ Վ.Դ. Նեբիլիցինի արտակարգ իրավիճակներում «Ժամանակի սուղ լիմիտի պայմաններում ընթացող գործընթացներին», ինչը վերագրվում է իրավապահի գործունեության հոգեկան հուսալիության հիմնահարցին (էջ 48), ինչը կարող էր լրացնել ու հարստացնել ատենախոսի մտքի փաստարկումները:
3. Ատենախոսության մեջ «հոգեբանական պատրաստվածություն» արտահայտությունը երբեմն ըստ նշանակության չի կիրառվել, քանզի.
    - «Հոգեբանական պատրաստվածություն»-ը զարգացվածության աստիճան է (մակարդակ):
    - «Հոգեբանական պատրաստություն»-ը զարգացման, կատարելագործման գործընթաց է (պրոցես):

- «Հոգեկան պատրաստականության վիճակ» գործունեության արդյունավետությանը նպաստող անհրաժեշտ հոգեկան ֆունկցիաների համակարգի ձևավորում (էջ 66): Բոլոր դեպքերում ներկայացված է «պատրաստվածություն» տերմինը:

4. Ներկայացնելով արտակարգ իրավիճակներին հակազդելու ֆիզիոլոգիական, հոգեբանական բաղադրիչները, անդրադարձ չկա սպորտային պատրաստության ոլորտին, այդ թվում՝ շարժողական ընդունակությունների զարգացմանը՝ ուժ, արագաշարժություն, դիմացկունություն, ճարպկություն, ճկունություն (ֆիզիկական, տեխնիկատակտիկական պատրաստություն, շարժումների ճշգրտություն և այլն):
5. Կան տեխնիկական բնույթի թերություններ"
   - Առանձին տողեր և մտքեր նույնությամբ կրկնվում են
     էջ 87- էջ 89 – վերաբերվում է հետազոտվողների համակազմին
     էջ 87- էջ 111 – վիճակագրական մեթոդ, համահարաբերակցային կապեր
6. Առկա են տեխնիկական վրիպակներ ու տերմինաբանական անճշտություններ.
   - Կիսատ էջեր, որոնք հնարավոր է չունենալ (էջ 94,100, 102, 108, 118):
   - Առանձին ցուցանիշներ ներկայացված են առանց անվանումների «Մեծ է», «Բարձր է», «ցածր է» 0,2, 0,7, 0,3-ով և այլն (էջ 101, 104, 105, 106 և այլն):
   - 47 էջում «զգայունակությունը» պետք է ներկայացվի զգոնություն:
   - 3,2 ենթավերնագիրը ճիշտ կլիներ ձևակերպել ոչ թե «... աշխատակիցների կառավարման յուրահատկությունները», այլ «... յուրահատկությունների հետազոտության արդյունքները»
   - Ատենախոսական աշխատանքի կառուցվածքի նկարագրում (սեղմագիր) չի նշված աղյուսակների, գծապատկերների, գրական աղբյուրների քանակը:
   - Գրական աղբյուրների շարքում կան հերթականության այբբենական անճշտություններ (№ 19, 25, 32, 35, 38, 46, 48, 60, 71, 72, և այլն):

Նշված անճշտությունները չեն նսեմացնում գիտական հետազոտության արժեքը, դրանք կարելի է ընդունել որպես ցանկություններ և առաջարկներ:

Ատենախոսությունը կատարված է բարձր գիտական մակարդակով և ունի կարևոր տեսական ու գործնական նշանակություն: Ատենախոսությունը ունի ինքնին ավարտուն տեսք, շարադրված է գրագետ, գիտամեթոդական ոճով, պահպանված է ուսումնասիրված նյութերի սոցիալ-հոգեբանական տրամաբանական կապերը, հստակ ներկայացված են հետազոտության բովանդակությունն ու արդյունքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գնահատելով թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ստացված արդյունքների հավաստիությունը, եզրակացությունների հիմնավորվածությունը կարելի է հավաստել, որ Արուսյակ Գևորգի Գևորգյանի «ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՄԱՐԴԿԱՅԻՆ

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ (ՀՀ ոստիկանության օրինակով)» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն գիտական ուսումնասիրություն է: Այն համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, ԺԹ.00.03 – «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է հայցվող հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել է պրոֆեսոր Ա.Ա. Լալայանի անվ. Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 10.10.2022թ նիստում (արձանագրություն թիվ 4), որին մասնակցել են ամբիոնի վարիչ՝ հ.գ.թ., պրոֆեսոր Հ.Ա. Բաբայանը, մ.գ.դ., պրոֆեսոր Ա.Ա. Չատինյանը, հ.գ.թ. դոցենտ Ա.Գ. Ստեփանյանը, հ.գ.թ., դոցենտ Վ.Ղ. Գեղամյանը, հ.գ.թ., դոցենտ Ն.Է.Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտ Ա.Ս.Դավթյանը, մ.գ.թ., դոցենտ Թ. Յու. Ազատյանը, դոցենտ Թ.Շ. Սոֆյանը, ասիստենտներ Ս.Ս. Արզաքանյանը, Ա.Մ. Գաբրիելյանը, գործավար՝ Մ.Գ. Ավետիսյանը:

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի պրոֆեսոր Ա.Ա. Լալայանի անվ. Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ՝ հ.գ.թ., պրոֆեսոր Հ.Ա. ԲԱԲԱՅԱՆ

Հաստատում եմ՝ հ.գ.թ., պրոֆեսոր Հ.Ա. Բաբայանի ստորագրությունը

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի գիտական քարտուղար՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ա.Ա. ՉԱՏԻՆՅԱՆ

«11», «հոկտեմբեր» 2022թ